



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՂԻՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Ա Ր Ա Ր Ա Տ Ե Ա Ն Կ Ա Ր Գ

▪ ՆՊԱՏԱԿ

Արարատեան կարգի գիտելիքներու բովանդակութիւնը կը ներառէ բաւարար պաշար՝ այն խմբապետներուն, որոնք իրենց պաշտօնին բերումով յանձնառու են խմբապետներ ղեկավարելու եւ անոնց աշխատանքներուն ցուցմունքներ տալու: Թեկնածուները իրենց պատրաստութեամբ ու փորձառութեամբ ի վիճակի պիտի ըլլան ստանձնելու պատասխանատու պաշտօններ միութեանական թէ ազգային զանազան կառոյցներու մէջ:

▪ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ունենալ Վկայեալ կարգ:
2. Ունենալ խմբապետի աստիճան:
3. Ըլլալ գործօն խմբապետ (նուազագոյնը երկու տարի):
4. Ստանձնած ըլլալ մասնաճիղի եւ կամ շրջանի ընդհանուր բանակումի պատասխանատուութիւնը կամ ըլլալ պատասխանատու կազմի անդամ:
5. Լաւատեղեակ ըլլալ միութեան եւ սկաւտութեան ընդհանուր կանոնադիրներուն:

▪ Ա. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

Սերտել, ուսումնասիրել, իրացնել եւ ներկայացնել՝

1. Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութիւնը, նպատակը եւ կառոյցը:
2. Միութեան Ընդհանուր եւ Ներքին Կանոնադիրները:
3. Վարչութեան Դիւանի գործունէութիւնը:
4. Փոխ-յարաբերութիւնները՝ խմբապետի, միատրի խմբապետի, մասնաճիղի խմբապետի եւ Սկաւտական Խորհուրդի հետ:

▪ **Բ. ԱԶԳԱՅԻՆ**

Ծանօթանալ ստորեւ յիշուած նիւթերուն, ապա ըստ նախասիրութեան ընտրել անոնցմէ մէկը եւ լաւապէս սերտելէ եւ ուսումնասիրելէ ետք՝ ներկայացնել զայն խումբի անդամներուն:

1. Հայոց Պատմութիւնը.-

ա. Հայկական Թագաւորութիւնները

բ. Մշակոյթը

- *Լեզու - Գրականութիւն*
- *Ճարտարապետութիւն-քանդակագործութիւն*
- *Երաժշտութիւն (երգ-պար)*

2. Հայ յեղափոխական շարժումներու գաղափարաբանութիւնը, գործելակերպը եւ նպատակը: Դէմքեր, դէպքեր եւ յեղափոխական դրուագներ.-

- *Կուկունեանի արշաւանքը*
- *Պանք Օթոման*
- *Խանասորի արշաւանք*
- *Փետրուարեան Ապստամբութիւն*
- *Քրիստաւոր – Ռոստոմ - Չաւարեան*
- *Հայ Դատի զինեալ պայքար Սողոմոն Թեհլիրեանէն մինչեւ Լիզպոնի 5 մարտիկները եւ Արցախեան պայքարի ազատամարտիկները:*

3. Հայրենիք-Սփիւռք – Հայ Դատ – Ժամանակակից հայոց պատմութիւն

▪ **Գ. ՄԿԱՌԻՏԱԿԱՆ**

1. Գիտնալ սկաուտական գործունէութեան մը թղթածրարը պատրաստել, ծրագրել, կազմակերպել եւ իրագործել:

2. Գիտնալ ծրագրել, կազմակերպել եւ վարել հանրային ձեռնարկ մը, ըստ շրջանի կարողականութեան:

3. Ծանօթանալ միջազգային սկաուտութեան կանոնագրութեան:

▪ **Դ. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ**

Ծանօթանալ եւ սերտել՝

1. Միջազգային գաղափարախօսութիւնները

2. Միջազգային կազմակերպութիւններէն մի քանին

3. Ազգային նկարագիրը եւ քաղաքացիական պատկանելիութիւնը:

▪ **Ե. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ**

Ծանօթանալ, սերտել եւ ուսումնասիրել՝

1. Մարդկային հոգեկան կառոյցը
2. Մարդկային հիմնական պահանջներն ու մղումները
3. Ղեկավարի մը յատկութիւնները

ա) Հանրային յարաբերութիւն

բ) Հաւասարակշռել տարակարծութիւնները անհարմարութիւններու կամ խմբաւորումներու միջեւ

▪ **Զ. ԿՐՕՆԱԿԱՆ**

1. Ծանօթանալ Հայաստանեայց եկեղեցւոյ 7 խորհուրդներուն.-

ա. Մկրտութիւն

բ. Դրոշմ

գ. Ապաշխարութիւն

դ. Հաղորդութիւն

ե. Պատկ-Ամուսնութեան

զ. Կարգ ձեռնադրութեան

է. Կարգ Հիանդաց կամ Վերջին Օծում

2. Ծանօթանալ եւ քաղաքացիական քրիստոնէութիւնը այլ կրօնքներու եւ կրօնական մտածողութիւններու եւ աղանդներու հետ

ա. Իսլամութիւն

բ. Հրէութիւն/Մովսէսականութիւն

դ. Պուրտայականութիւն

է. Հինդուիզմ

զ. Եհովայի վկաներ

3. Ծանօթանալ եւ սերտել Ազգային Սահմանադրութիւնը

Վաւերացուած Կեդրոնական Վարչութեան

Բ. Լիագումարին (2էն 5 Սեպտեմբեր 2008)

Երեւան-Հայաստան